Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1496-Ն որոշման

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՆՈՐՄԵՐՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

1. Սույն որոշման N 1 հավելվածով սահմանված դեղերը և բժշկական նշանակության գույքը տվյալ տարում կուտակվում են նախորդ տարվա ընթացքում ռազմավարական պաշարների պահուստի անվանացանկում ընդգրկված սույն որոշման 2-րդ կետով սահմանված կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություններ) կողմից՝

1) «Նյութական պահուստի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ռազմավարական պաշարների կուտակման ծավալների համաձայն.

2) Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից սահմանված դեղերի փոխադրման, պահեստավորման և պահպանման նորմերին համապատասխան՝ ըստ ժամանակացույցի՝

Դեղերի և բժշկական նշանակության գույքի անվանումը	**«Նյութական պահուստի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ռազմավարական պաշարների կուտակման ժամանակացույց**	
	ապրիլի 15-ի դրությամբ (քանակը)	**սեպտեմբերի 15-ի դրությամբ քանակը)**
N 1 հավելվածով սահմանված դեղեր և բժշկական նշանակության գույք	50%	100%

2. 2025 թվականի ապրիլի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում ռազմավարական պաշարների կուտակված նվազագույն քանակ սահմանվում է 50%-ի չափով:

3. 2025 թվականի սեպտեմբերի 15-ից սկսած կազմակերպությունները պետք է պահպանեն սույն որոշման N 1 հավելվածով սահմանված դեղերը և բժշկական նշանակության գույքը մշտապես՝ յուրաքանչյուր տարվա համար 100 տոկոսի չափով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20.09.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ